# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ N 188-Ա**

**«19» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023Թ**

**ԱՐԵԳՆԱԶ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԵՐՆԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N181-Ն որոշմամբ հաստատված կարգի 33–րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 1-ի N 191-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դրական եզրակացությունն և Արեգնազ Մկրտչյանի դիմումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. 2023 թվականի սեպտեմբերի 20-ից Արեգնազ Մկրտչյանին նշանակել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2023 թվականի սեպտեմբերի 20-ից Արեգնազ Մկրտչյանին ազատել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումից:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում Արեգնազ Մկրտչյանին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

9/19/2023

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

**ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Քեղեգնաձոր**